

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԱՆՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ  
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանը որդեգրել է կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն, որը ենթադրում է ճյուղային ներդաշնակ զարգացումներ: Դրանց ենթատեքստում էներգետիկան՝ որպես հասարակության զարգացում ապահովող կարևորագույն ոլորտ, իր որակական և քանակական զարգացումներով պայմանավորում է երկրի առաջընթացի աստիճանը և քաղաքակրթության մակարդակը:

Մարդկային հասարակության մերօրյա զարգացումները բնորոշվում են բնական պաշարների անհամամասնական բարձր ծախսումների արդյունքում երկրների տնտեսության չափազանց ցածր արդյունավետությամբ: Քաղաքակրթության գերխնդիրն է ապահովել այնպիսի առաջընթաց, որը բնապահպանական խնդիրների ներդաշնակեցման և հավասարակշռման միջոցով կպայմանավորի հաջորդ սերունդների կայուն զարգացումը:

Ընդերքի ածխաջրածնային վառելիքի սահմանափակ պաշարների պայմաններում մարդկային քաղաքակրթության զարգացման էներգետիկ ապահովվածության համար հրամայական է դառնում տվյալ երկրի ողջ էներգետիկ պաշարների, այդ թվում նաև էներգիայի վերականգնվող աղբյուրներ (վերականգնվող էներգետիկայի) լայնածավալ յուրացումը և ներառումը վառելիքաէներգետիկ հաշվեկշռի մեջ: Հայաստանում, որտեղ բացակայում են արդյունաբերական նշանակություն ունեցող սեփական հանածո վառելիքային պաշարները, խնդրի լուծումը գտնվում է տնտեսության էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգետիկայի տեղական էներգապաշարների զարգացման մեջ:

Աշխարհի զարգացած երկրները անցյալ դարի վերջին տասնամյակների էներգետիկական ճգնաժամային պայմաններում ձեռնամուխ եղան խիստ թերի օգտագործվող սեփական վառելիքաէներգետիկ աղբյուրների՝ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացմանը: Այս ընթացքում բացահայտվեցին տնտեսությունում օգտագործվող տեխնոլոգիական գործընթացների անկատարությունը էներգետիկական տեսակետից և դրանցում առկա էներգախնայողության մեծ ներուժը:

Տնտեսության զարգացման մեջ էներգախնայողական քաղաքականություն որդեգրած և այն իրականացնող երկրներն իրենց համախառն ներքին արդյունքի էներգաարդյունավետության բարձրացման գործում ակնառու հաջողություններ են գրանցում: Ջարգացած երկրների արտադրության աճի համար անհրաժեշտ էներգապաշարների գերակշռող մասը լրացվում է էներգախնայողության հաշվին:

Անցյալ դարի վերջին տասնամյակներում Համաշխարհային առաջավոր էներգախնայողության փորձը ցույց տվեց, որ գործող տեխնոլոգիաների էներգախնայողական ներուժը կազմում է էներգածախսի 30-40%-ը, իսկ վառելիքի տնտեսումը 2-3 անգամ էժան է, քան

համարժեք քանակությամբ վառելիքի արդյունահանումը և մատակարարումը սպառողներին:

Էներգախնայողությունը՝ որպես նոր աղբյուր, ավելի ծեռնտու է մյուս էներգաաղբյուրներից: Այսպես, ըստ Միջազգային էներգետիկական գործակալության տվյալների՝ էներգախնայողական միջոցառումների իրագործման մեջ ծախսված յուրաքանչյուր դոլարն ավելի շատ «մաքուր» էներգիա է տալիս, քան այն դոլարը, որ ծախսվում է էներգիայի այլ աղբյուրների ստեղծման համար: Հարկ է հատուկ նշել, որ **խնայված էներգիայի զգալի մասը ձեռք է բերվում սպառման ոլորտում, և այդ էներգիան էկոլոգիապես մաքուր է, քանի որ նրա ստացման պրոցեսը արտանետումներ չունի և, ընդհակառակը, նվազեցնում է արտանետումները:**

Վերականգնվող էներգետիկայի զարգացման մեծ փորձ է կուտակվում աշխարհի տարբեր երկրներում: Եվրամիությունը նախատեսում է 2010 թվականին սեփական վերականգնվող էներգաաղբյուրների արտադրությունը հասցնել մինչև ողջ էներգաարտադրության 12%-ին:

Հայաստանն իր սեփական վառելիքաէներգետիկ պաշարներով բավարարում է երկրի պահանջմունքի մինչև 8%-ը (ատոմային էներգետիկայի ներառմամբ՝ 35%) և, բնականաբար, խիստ կախման մեջ է արտերկրյա էներգաաղբյուրներից: Սրա հետ մեկտեղ Հայաստանի տնտեսության էներգետիկ արդյունավետությունը զգալիորեն զիջում է տարածաշրջանի և զարգացած երկրների համանման ցուցանիշին, իսկ մեզանում գործող տեխնոլոգիաները նոր և իդեալական պրոցեսների (տեխնոլոգիաների) համեմատությամբ մի քանի անգամ փոքր օգտակար գործողության գործակից ունեն: Ուստի Հայաստանի արդի և ապագա զարգացումների համար էներգետիկ ապահովվածության բավարարման ոլորտի գերխնդիրը էներգետիկ անկախության բարձր աստիճանի ապահովումն է սեփական էներգետիկ աղբյուրների զարգացման միջոցով, որը ենթադրում է տնտեսության էներգաարդյունավետության նշանակալի բարձրացում և վերականգնվող էներգաաղբյուրների լայնամասշտաբ կիրառում:

Այսպիսով, Հայաստանի տնտեսության և էներգետիկայի կայուն զարգացումը և անկախության ապահովումը պետք է հիմնվի էներգասպառման բոլոր ճյուղերում էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգետիկայի զարգացման ռազմավարության և ծրագրի վրա, որոնց մշակման հիմնական դրդապատճառը բխում է ազգային շահերից և նպատակամղված է համախառն ներքին արդյունքի ցածր էներգաարդյունավետության և վառելիքաէներգետիկ սեփական պաշարների ընդգծված սղության բարդությունները մեղմելուն ու հաղթահարելուն:

## II. ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի հիմնական խնդիրը Հայաստանի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացման ծրագրային նպատակները և դրանց հասնելու ուղիները նախանշելն է:

Երկրի վառելիքաէներգետիկ համալիրում նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների և վերականգնվող էներգետիկայի ներմուծման խնդրի լուծումը կբարձրացնի տնտեսության էներգետիկ ապահովվածության աստիճանը սեփական վառելիքաէներգետիկ պաշարներով, կմեղմի երկրի կախվածությունն արտերկրի հումքային աղբյուրներից, հիմք կստեղծի տնտեսության քանակաճ (էքստենսիվ) զարգացումից արտադրողական զարգաց-

ման անցման և սեփական շահերով թելադրված ազգային քաղաքականության վարման համար՝ բարձրացնելով երկրի էներգետիկ անկախության աստիճանը:

Երկրի տնտեսության մեջ վառելիքաէներգետիկ պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացումը և վերականգնվող էներգետիկայի աղբյուրների կիրառումը կայանաճավորի արտանետումների նվազեցում և կնպաստի շրջակա միջավայրի պահպանության խնդրի լուծմանը:

Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ներդրումն ուղեկցվում է արտադրական և կառավարման նոր տեխնոլոգիաների օգտագործմամբ, որը հարաբերակցվում է Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական զարգացման ռազմավարությամբ որդեգրած գիտելիքահենք տնտեսության ստեղծման ուղղության հետ, իսկ վերջինս կարևոր հիմք է հանդիսանում էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացման համար: Հակառակ դեպքում չի բացառվի, որ երկիրը դառնա զարգացած երկրների համար հումքային և մարդկային ռեսուրսների աղբյուր:

Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացումները կայանաճավորեն երկրի էներգետիկ անկախության աստիճանի բարձրացումը, ինչը նաև կնպաստի տարածաշրջանի էներգետիկ համակարգում ինտեգրվելու գործին:

Էներգետիկայի զարգացումը միայն բնական չվերականգնվող (բնական գազ, նավթամթերք և այլն) պաշարների օգտագործմամբ անհեռանկար է դրանց անվերականգնելիության և տեսանելի ապագայում սպառման և/կամ հարաճող գների պարագայում. այս իրողության պայմաններում պաշարների խնայման (արդյունավետ օգտագործման) ու վերականգնվող պաշարների (արև, քամի և այլն) օգտագործմամբ տնտեսության կայուն զարգացումն այլընտրանք չունի:

Անառարկելի իրողություն է այն, որ տնտեսության ճյուղերի էներգաարդյունավետության բարձրացումը պայմանավորում է ապրանքների (ծառայությունների) **ինքնարժեքում էներգետիկ բաղադրիչի նվազեցումը և հետևապես մրցունակության ապահովումը:**

Տնտեսության ընթացիկ զարգացումներն ապահովելու համար առկա է ՎԷՊ-ի արտադրության և սպառման աճի միտում: Սա էներգախնայողության զարգացման ուղու համար լուրջ խոչընդոտ է հանդիսանում և երկրի էներգախնայողության ծրագրային միջոցառումները պետք է նախադրյալներ ստեղծեն այն հաղթահարելու համար:

Կառավարության քաղաքականության առաջնային խնդիրները փոխկապակցված են: Դրանք են՝ բնակչության զբաղվածության աստիճանի բարձրացումը, տնտեսական աճը, տնտեսության ճյուղերի զարգացումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, մարդկանց առողջության պաշտպանության բարելավումը, ՀՆԱ-ի էներգաարդյունավետության բարձրացումը և այլն:

Տնտեսական աճը և շրջակա միջավայրի պաշտպանության հարցերը կայուն զարգացման ապահովման պայմաններում որևէ հակասություն չեն առաջացնում, երբ կառավարության քաղաքականությունը համալիր բնույթ ունի, և որի իրականացումը ենթադրում է պետական կառավարման տարբեր մակարդակներում էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանը խոչընդոտող տարատեսակ նորմատիվ ակտերի բացասական ներգործությունը մեղմող քայլերի կատարում, ակտերի կոորդինացում և ներդաշնակեցում:

Սույն ազգային ծրագիրը մշակվել է՝ հիմք ունենալով 1992թ. կայացած Միավորված ազգերի կազմակերպության՝ շրջակա միջավայրի և զարգացման համաժողովի (Ռիոյի համաժողովի կամ Երկիր մոլորակի գազաթափողովի) ընդունած 21-րդ օրակարգի «Կայուն զարգացման գործողությունների գլոբալ ծրագիրը», դրանից տասը տարի անց Իոհաննեսբուրգում կայացած գազաթափողովի՝ կայուն զարգացման ուղղությամբ նախանշված

սկզբունքները, դրանցից բխող և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք այլ բնապահպանական կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի և ՀՀ «Տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը» փաստաթղթի նպատակային դրույթները, ինչպես նաև «Էներգետիկայի մասին» և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքներում ամրագրված էներգետիկայի, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և ուղղված է հետևյալ նպատակների իրականացմանը.

1) Հայաստանի տնտեսության կայուն զարգացման նպաստում:

2) Հայաստանի տնտեսությունում էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացմամբ մեղմելու երկրի կախվածությունն արտաքին մատակարարներից և մատակարարման ուղիների տարատեսակ խափանումներից:

3) Էներգետիկայի և էներգատնտեսությունների անարդյունավետ աճի մեղմացումը՝ էներգաարդյունավետության բարձրացման միջոցով ապահովելով ինտենսիվ (արդյունավետ) զարգացումներ:

4) Վառելիքէներգետիկ պաշարների արդյունավետ օգտագործումը և տնտեսության մեջ վերականգնվող էներգետիկ աղբյուրների առավելագույն ներառումը և դրանց ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը:

5) Մշակել սույն Ծրագրով ներկայացված նպատակների իրագործմանն ուղղված գործուն միջոցառումներ՝ ներառելով նորագույն տեխնոլոգիաների և կառավարման եղանակների ժամանակակից զարգացումները:

6) Երկրի էներգետիկայի ոլորտի սեփական գերազանցությունների առավելագույն իրականացում (վերականգնվող վառելիքէներգետիկ պաշարներ, մասնագիտական մարդկային պաշար, «ավելցուկային» էներգահամակարգ շահագործելու ավանդույթ, էներգասակավ տարածաշրջանի արդի պայմաններ և այլն):

Սույն ծրագրում որպես էներգաարդյունավետության բարձրացման հիմնական տարրեր հանդես են գալիս.

7) Տնտեսապես արդարացված էներգախնայողության ներուժի բացահայտում և արդյունավետ ծախսերով դրա գործադրում տնտեսության բոլոր ոլորտներում:

8) Տնտեսության ճյուղերում սպառվող վառելիքէներգետիկ պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացում:

9) ՎեՊ սպառողների կողմից կատարելագործված տեխնոլոգիաների և աշխատանքային ռեժիմների ընդունում:

10) ՎեՊ սպառողների համար պաշարների, ապրանքների և ճիշտ վճիռներ կայացնելուն նպաստող որակյալ խորհրդատվության մատչելիության ապահովում:

Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի սույն ազգային ծրագիրն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը.

11) Երկրի էներգետիկական աղբյուրների զարգացումը պլանավորելիս որպես առաջնայնություն կարևորել էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի համատեղ և համալիր զարգացումը, նկատի ունենալով, որ էներգաարդյունավետության բարձրացման տարբերակները, որպես կանոն, ունենում են ցածր ծախսատարություն:

12) ՎեՀ-ի զարգացման պետական քաղաքականությունը ներդաշնակեցնել ողջ տնտեսության զարգացման խնդիրների հետ այնպես, որ ապահովվի երկրի կայուն զարգա-

ցումը՝ դրա համար ստեղծելով նորմատիվային դաշտի բարեփոխումների և հանրության շահագրգիռ մասնակցության բոլոր նախադրյալները:

13) Երկրի տնտեսության և դրա աճին համապատասխան վառելիքաէներգետիկ հաշվեկշռում ապահովել էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ծանրակշիռ մասնակցությունը:

14) Երկրի ֆինանսավարկային քաղաքականությունը հավասարապես նպատակաուղղել դեպի էներգաարդյունավետության և ՎԷՊ-ի արտադրության զարգացման խնդիրների լուծմանը, ապահովելով դրանց ֆինանսավորման աղբյուրների (կապիտալի) մատչելիության հավասար պայմաններ:

15) Ստեղծել և պահպանել տնտեսության գործուն շուկայական կառուցվածք՝ էներգաարդյունավետության շահերը ներկայացնելու և բացատրելու միջոցով ապահովելով նրա մասնակիցների արդյունավետ գործողությունների ընտրությունը:

16) Կազմակերպել, խրախուսել և ապահովել ժամանակակից տեխնոլոգիաների մատչելիության հավասար պայմաններ հանրության բոլոր անդամների (կազմակերպությունների) համար:

### III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հայաստանի համախառն ներքին արդյունքը 2005 թ. կազմել է 2228 մլրդ. դրամ. այն 2000 թվականից աճել է 1197 մլրդ. դրամով կամ 86%-ով (աղ. 1, բնական գազի 2001թ. ներմուծման և վերջնական սպառման տվյալները բերված են ըստ փորձագիտական գնահատումների): 2000-2004 թթ. համախառն ներքին արդյունքի տարեկան աճը կազմել է 12,86%: Համախառն ներքին արդյունքի աճի ցուցանիշով Հայաստանը 170 երկրների մեջ վերջին տարիներին գտնվել է առաջինների շարքում (աղ. 2):

Աղյուսակ 1

#### Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական և էներգատնտեսական բնութագրերը

h/h	Ցուցանիշ	Չափման միավոր	Տարի				
			2001	2002	2003	2004	2005
1	ՀՆԱ	մլրդ. դրամ	1176	1363	1625	1896	2228
2	Բնակչություն	մլն. մարդ	3,2129	3,2103	3,2122	3,2158	3,2185
3	Առաջնային վառելիքաէներգետիկ պաշարներ	հազ. տ.ն.հ	2032	2001	2080	2305	2618
4	Էլեկտրաէներգիայի արտադրություն	մլն. կՎտ· ժ	5745	5517	5501	6031	6316
5	Բնական գազի ներմուծում	մլն. մ <sup>3</sup>	1409	1070	1201	1333	1685
6	Նավթամթերքների ներմուծում	հազ. տ.ն.հ	368	379	432	412	402
7	Էլեկտրաէներգիայի առևտրային արտահանում	մլն. կՎտ· ժ	699	658	583	1004	1151
8	Էլեկտրաէներգիայի վերջնական սպառում	մլն. կՎտ· ժ	3450	3400	3660	4000	4370
9	Բնական գազի վերջնական սպառում	մլն. մ <sup>3</sup>	1300	901	977	1156	1444
10	Էներգաապահովվածություն սեփական ՎԷՊ-ով (ներառյալ ԱԷԿ-ը)	%	30,33	38,32	33,87	35,56	33,10
11	ՎԷՊ-ի վերջնական սպառում	հազ. տ.ն.հ	1610	1302	1430	1564	1789


h/h	Ցուցանիշ	Չափման միավոր	Տարի				
			2001	2002	2003	2004	2005
12	ՀՆԱ-ի էներգատարություն	<u>կգ ն.հ.</u> հազ. դրամ	1,728	1,469	1,280	1,216	1,175
13	ՀՆԱ-ի էլեկտրատարություն	<u>կՎտ· ժ</u> հազ. դրամ	4,885	4,050	3,386	3,180	2,835
14	ՀՆԱ-ի էներգաարդյունավետություն	<u>հազ. դրամ</u> կգ ն.հ.	0,579	0,681	0,781	0,823	0,851

Աղյուսակ 2

**Մի շարք երկրների ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տոկոսը ըստ ՀՆԱ-ի կառուցվածքի 2000-2004թթ.**


Հ/հ	Երկրի անվանում	ՀՆԱ, %	ՀԱ գյուղատնտեսություն, %	ՀԱ արդյունաբերություն, %	ՀԱ սպասարկում, %
1	Հայաստան	12,86	13,68	16,58	11,23
2	Ադրբեջան	10,48	3,18	12,69	3,67
3	ԱՄՆ	3,30	2,83	2,83	2,83
4	Բելառուս	14,41	17,92	14,33	14,56
5	Բուլղարիա	13,64	5,09	12,02	18,09
6	Գերմանիա	6,44	4,02	5,08	6,85
7	Էստոնիա	15,13	9,46	19,71	16,89
8	Թուրքիա	7,06	-0,96	7,24	6,07
9	Իրան	10,99	2,63	16,02	7,02
10	Լատվիա	11,83	10,65	12,24	13,47
11	Հունգարիա	16,53	16,24	16,24	16,24
12	Ղազախստան	16,49	11,67	15,88	18,09
13	Ճապոնիա	1,20	0,95	0,95	0,95
14	Մոլդովա	13,35	8,06	13,62	17,35
15	Չեխիա	13,98	7,30	13,20	15,55
16	Ռումինիա	13,57	14,90	17,09	11,85
17	Ռուսաստան	15,43	10,13	13,05	18,57
18	Սլովակիա	14,32	1,40	13,36	15,44
19	Վրաստան	9,67	8,38	13,30	8,87
20	Ուզբեկստան	-5,78	-6,28	-8,33	-6,61

Հայաստանի տնտեսության երեք ճյուղերը՝ արդյունաբերությունը, սպասարկումը և գյուղատնտեսությունը, երկրի համախառն ներքին արդյունքում կազմում են մոտավորապես 40%, 35% և 25%: Արդյունաբերության ցուցանիշը մոտ է զարգացած երկրների ցուցանիշին (30-40%), սպասարկման ճյուղով այդ ցուցանիշը 1,5-2 անգամ փոքր է զարգացած երկրների համապատասխան ցուցանիշներից (50-70%) (նկ.1): Համախառն ներքին արդյունքի կառուցվածքում գյուղատնտեսության մեկ քառորդ մասնաբաժինը բնութագրում է երկիրը որպես գյուղատնտեսական ուղղվածության: Այսպիսով, ակնհայտ է, որ Հայաստանի տնտեսությունն արդի պայմաններում գյուղատնտեսական-արդյունաբերական է՝ զարգացող սպասարկման ճյուղով:




Նկար 1. Մի շարք երկրներում ՀՆԱ-ի կառուցվածքները 2004թ., %

Հայաստանի համախառն ներքին արդյունքի կառուցվածքը 2000-2004թթ. լուրջ փոփոխություններ չի կրել:



Նկար 2. Հայաստանի ՀՆԱ-ի կառուցվածքի դինամիկան

Հայաստանի գյուղատնտեսության համախառն արդյունքը 2004թ. ունեցել է բարձր ցուցանիշ՝ 0,99 հազար ԱՄՆ դոլար/մարդ: Արդյունաբերության և ծառայությունների համապատասխան ցուցանիշներով (ԱՄՆ դոլար/մարդ) Հայաստանը խիստ հետ է մնում առաջավոր երկրներից, սակայն տարեկան աճի տոկոսը բոլոր 3 ճյուղերում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, սպասարկում) բարձր մակարդակի վրա է (նկ.3):



Նկար 3. Մի շարք երկրների ՀՆԱ-ի կառուցվածքները 2004թ.՝ գնողունակության համարժեքի բերված, հազ. ԱՄՆ դոլար/մարդ

2001 թվականից մինչև 2005 թթ. ընկած ժամանակահատվածում համախառն ներքին արդյունքի աճին (1175,9 մլրդ.դրամից մինչև 2228 մլրդ.դրամ) զուգընթաց շուրջ 1,5 անգամ նվազել է նրա էներգատարությունը՝ 1,73 կգ ն.հ/հազ.դրամից մինչև 1,18կգն.հ/հազ.դրամ, իսկ էլեկտրատարությունը նվազել է 4,89 կՎտ·ժ/հազ.դրամից մինչև 2,84 կՎտ·ժ/հազ.դրամ:



Էներգետիկ ցուցանիշների դինամիկան վկայում է, որ տնտեսության մեջ վառելիքաէներգետիկ պաշարների օգտագործման արդյունավետությունն ունի դրական միտում (աղ.1):


Համախառն ներքին արդյունքի էներգաարդյունավետությունը և էլեկտրաարդյունավետությունը 2001-2005 թվականներին համապատասխանաբար աճել են 46% և 71%-ով:

Համախառն ներքին արդյունքի էներգատարության՝ մինչև 32% չափով նվազումը հիմնականում արդյունք է ոչ էներգատար և նորագույն տեխնոլոգիաների զարգացման (սննդի արդյունաբերություն, սպասարկում և այլն), սպառողի կողմից բնական գազի անմիջական օգտագործման, ինչպես նաև համախառն ներքին արդյունքի ֆիզիկական ծավալի ինդեքսի տարեկան աճի, որը, ինչպես արդեն նշվեց, բնութագրվում է տարեկան աճի զգալի տեմպերով՝ շուրջ 8-14 %:

Համախառն ներքին արդյունքի էներգատարությունը Հայաստանի Հանրապետությունում 2003 թ. կազմել է 0,74 կգ ն.հ./ԱՄՆ դոլար և մոտ է էստոնիայի՝ 0.75, Չեխիայի՝ 0.73 ցուցանիշներին, հեռու է Ռուբեկստանի՝ 3,35, Մոլդովայի և ՌԴ-ի՝ 2,09 ցուցանիշներից: Հայաստանի Հանրապետությունից առաջանցիկ ցուցանիշներ ունեն Լատվիան՝ 0,46, Հունգարիան՝ 0,51, Թուրքիան՝ 0,38 (նկ.4):

Հայաստանի համախառն ներքին արդյունքի էներգատարությունը և էներգիայի սպառման կառուցվածքը, ըստ տնտեսության ճյուղերի, բնութագրում են մի կողմից տնտեսության զարգացվածության աստիճանը (փոքր էներգատարություն), իսկ մյուս կողմից՝ էներգատար տեխնոլոգիաների առկայությունը (բարձր էներգատարություն):

Հայաստանի համախառն ներքին արդյունքի էներգատարությունը միջին ցուցանիշ ունի. մոտ է այնպիսի զարգացող երկրների ցուցանիշներին, ինչպիսիք են էստոնիան, Չեխիան, Հունգարիան:




Նկար 4. Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն և ՀՆԱ-ի էներգատարությունը մի շարք երկրներում (2003թ.)


Ինչպես հայտնի է, համախառն ներքին արդյունքի էներգատարության համեմատական առանձին երկրների միջև կարող է սխալ եզրակացության հանգեցնել, եթե դրա հետ չհամադրվի մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի ծավալի ցուցանիշը: Հայաստանի օրինակն այդպիսին է, այսինքն՝ ոչ բավարար. միջին էներգատարության ցուցանիշը ընդամենը արդյունք է աշխատանքի ցածր էներգազինվածության: Վերջինիս աճը (մինչև

զարգացած երկրների մակարդակին հասնելը) կայանաձևորի համախառն ներքին արդյունքի էներգատարության ցուցանիշի վատթարացում՝ աճ:

Հայաստանի արդյունաբերությունն իր էներգատարությամբ ԱՊՀ երկրներում ունի ցածր («լավ») ցուցանիշ (329,4 կգ մ.հ/հազ.դոլար), Ուզբեկստանը՝ 2616, ՌԴ՝ 831, Էստոնիան՝ 569, Մոլդովան՝ 1264, Վրաստանը՝ 304 (նկ.5,6):



Նկար 5. Էներգիայի սպառման կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (2003թ.)



Նկար 6. Տնտեսության ճյուղերի էներգատարությունը 2003թ., կգ մ.հ./ գնողունակության համարժեքի բերված հազ. դոլար

Հայաստանի Հանրապետությունում էներգատար արտադրությունների բեռնվածությունը շատ ցածր է («Նաիրիտ», «Պոլիվինիլացետատ» և այլն): Գործող կազմակերպություններում շատ են նորագույն էներգաարդյունավետ տեխնոլոգիական համալիրները (օրինակ՝ սննդի արդյունաբերություն, ոչ էներգատար մշակող արդյունաբերություն): Այս ցուցանիշը պետք է պահպանել և նվազեցնել հետագայում, երբ հնարավոր կլինի համեմատաբար էներգատար արտադրությունների զարգացումը:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության էներգատարությունը (24 կգ ն.հ./հազ.դոլար) մոտ է Վրաստանի (8,2), Ադրբեջանի (20), Բուլղարիայի (42,6) ցուցանիշներին և վկայում է գյուղմեխանիզացիայի ցածր մակարդակի մասին. հիմնականում էներգետիկ ծախսը կատարվում է ոռոգման համակարգում (ջրի պոմպեր) (նկ.6)


Սպասարկման ոլորտում էներգատարության ցուցանիշը Հայաստանում (90,4 կգ ն.հ./հազ.դոլար) մոտ է ԱՊՀ-ի և տարածաշրջանի շատ երկրների և զարգացած երկրների (Էստոնիա՝ 91, Լատվիա՝ 99,7, Չեխիա՝ 114,8) համապատասխան ցուցանիշին (նկ.6):

Էներգետիկական տեսակետից Հայաստանի սպասարկման ոլորտը ներդաշնակ զարգացում ունի, նրա էներգաարդյունավետության խնդիրները համընկնում են զարգացած երկրների խնդիրների հետ և էներգախնայողության մեծ ներուժ չեն պարունակում:

Ըստ մեկ շնչին ընկնող վառելիքաէներգետիկ պաշարների սպառման և համախառն ներքին արդյունքի ծավալով Հայաստանի Հանրապետությունը հավասարվում է Վրաստանի և Մոլդովայի մակարդակին և շուրջ 6 անգամ ցածր ցուցանիշ ունի Չեխիայի և Էստոնիայի համեմատ: Վերջինս պայմանավորված է աշխատանքի ցածր էներգազինվածությամբ և ոչ բավարար արդյունավետությամբ (նկ.7):

Ջարգացած երկրների հետ համեմատելով՝ պետք է արձանագրել, որ Հայաստանի տնտեսության զարգացումը պահանջում է մեկ շնչին ընկնող վառելիքաէներգետիկ պաշարների տեսակարար ծախսի աճ, ինչը կպայմանավորի նաև համախառն ներքին արդյունքի համապատասխան աճ (մեկ բնակչի հաշվով):

Հայաստանում մեկ բնակչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշները գյուղատնտեսությունում, արդյունաբերությունում և ծառայություններում քիչ են տարբերվում միմյանցից, որը վկայում է վերջին երկու ոլորտների ցածր զարգացողության մասին: Հայաստանի տնտեսության այս ոլորտների արդյունավետության բարձրացումը զգալի ներուժ ունի, ինչը երևում է զարգացած երկրների օրինակով:



Նկար 7. Մի շարք երկրներում մեկ շնչին ընկնող առաջնային ՎԷՊ-ը 2003թ., տ ն.հ./մարդ

IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՌԵԼԻՔԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԼԻՐԻ ԵՎ ՎԱՌԵԼԻՔԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հայաստանի սեփական վառելիքաէներգետիկ պաշարներ են գահավիժող ջուրը, միջուկային վառելիքը (ատոմային էլեկտրակայանի միջուկային վառելիքը ներկրվում է Ռուսաստանի Ղաշնությունից, սակայն ըստ Միջազգային էներգետիկական գործակալության՝ այդ կայաններից ստացված էներգիան դասվում է երկրի սեփական վառելիքաէներգետիկ պաշարների շարքին), հողմը, էներգետիկ հաշվեկշռում փոքր ծավալ ունեցող վառելավայտը, քարածուխը, աթարը, արեգակնային ճառագայթումը և երկրի ընդերքի տաք ջրերը և ապարները:

Հայաստանի Հանրապետությունում սպառվող վառելիքաէներգետիկ պաշարների զգալի մասը ներկրվում է արտերկրից: Օրինակ, 2005 թ. երկրում սպառված 3739,5 հազ. տ պ.վ. վառելիքաէներգետիկ պաշարների միայն 6,3% (236,9) է կազմել հիդրոէներգիայի չափաբաժինը և ևս 26,8% (1000,9) է կազմել ատոմակայանի էլեկտրաէներգիայի արտադրանքը, կամ հիդրո- և ատոմային էներգապաշարները միասին (սեփական ՎԷՊ) կազմել են վառելիքաէներգետիկ պաշարների 33,1%-ը (1237,8): Այսպիսով, 2005թ. առաջնային վառելիքաէներգետիկ պաշարների 66,9%-ը ներկրվել է արտերկրից (աղ. 3): Այստեղ և այսուհետ «Ընդամենը» տողում գումարի արդյունքում ստացված արժեքների առաջացած անհամապատասխանությունը նշված գումարելիների գումարի նկատմամբ արդյունք է թվերի մեքենայական կլորացման:

Աղյուսակ 3

**Վառելիքային պաշարների սպառման կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի և վառելիքի տեսակների, հազ. տ պ.վ.**

h/h	Վառելիքի տեսակ / Ոլորտ	2001	2002	2003	2004	2005
<b>1</b>	<b>Բենզին</b>	<b>280,1</b>	<b>270,5</b>	<b>277,1</b>	<b>321,2</b>	<b>275,2</b>
	Տրանսպորտ և կապ	224,1	216,4	235,5	273	234
	Գյուղատնտեսություն	56	54,1	41,6	48,2	41,2
<b>2</b>	<b>Դիզելային վառելիք</b>	<b>126,6</b>	<b>129,9</b>	<b>149,9</b>	<b>156</b>	<b>163,1</b>
	Տրանսպորտ և կապ	31,6	32,5	37,5	31,2	32,6
	Գյուղատնտեսություն	95	97,4	112,4	124,8	130,5
<b>3</b>	<b>Մազութ</b>	<b>2,73</b>	<b>1,01</b>	<b>1,93</b>	<b>1,65</b>	<b>1</b>
	Էներգետիկա	2,73	1,01	1,93	1,65	1
<b>4</b>	<b>Կերոսին և ավիակերոսին</b>	<b>70,54</b>	<b>76,22</b>	<b>38,7</b>	<b>57,5</b>	<b>66,77</b>
	Բնակչություն և ծառայություններ	11,3	1,2	10,2	0	0
	Տրանսպորտ և կապ	59,24	75,02	28,5	57,5	66,77
<b>5</b>	<b>Հանածո նավթ</b>	<b>12</b>	<b>16,5</b>	<b>34,5</b>	<b>16,2</b>	<b>12,2</b>
	Արդյունաբերություն	12	16,5	34,5	16,2	12,2
<b>6</b>	<b>Նավթ</b>	<b>5,22</b>	<b>0</b>	<b>45,19</b>	<b>0,07</b>	<b>0</b>
	Արդյունաբերություն	5,22	0	45,19	0,07	0
<b>7</b>	<b>Հեղուկ գազ</b>	<b>30,5</b>	<b>38,1</b>	<b>36,6</b>	<b>36,9</b>	<b>30,5</b>
	Բնակչություն և ծառայություններ	25,3	32,4	31,1	31,3	25,9
	Տրանսպորտ և կապ	5,2	5,7	5,5	5,6	4,6
<b>8</b>	<b>Բնական գազ</b>	<b>1494,6</b>	<b>1036,6</b>	<b>1123,77</b>	<b>1329,28</b>	<b>1660,07</b>
	Արդյունաբերություն	192,6	222,33	237,21	317,12	398,76
	Բնակչություն և ծառայություններ	165,5	116,53	176,04	253,52	357,1
	Էներգետիկա	1032,2	596,41	569,31	617,67	711,88
	Տրանսպորտ և կապ	104,3	101,33	141,21	140,97	192,33
<b>9</b>	<b>Ածուխ և վառելավայտ</b>	<b>20,4</b>	<b>38,4</b>	<b>13,54</b>	<b>20,65</b>	<b>15,21</b>
	Բնակչություն և ծառայություններ	20,4	38,4	13,54	20,65	15,21
<b>10</b>	<b>Ընդամենը վառելիքային պաշարներ, հազ. տ պ.վ. (հազ. տ ն.հ), այդ թվում</b>	<b>2042,7 (1429,9)</b>	<b>1607,2 (1125,1)</b>	<b>1721,2 (1204,9)</b>	<b>1939,5 (1357,6)</b>	<b>2224,1 (1556,8)</b>

	արդյունաբերություն	209,8	238,8	316,9	333,4	411,0
	բնակչություն և ծառայություններ	222,5	188,5	230,9	305,5	398,2
	էներգետիկա	1034,9	597,4	571,2	619,3	712,9
	տրանսպորտ և կապ	424,4	431,0	448,2	508,3	530,3
	գյուղատնտեսություն	151,0	151,5	154,0	173,0	171,7
11	Վերականգնվող աղբյուրներ (ներկայացված է գեներատորների արտադրած էներգիան), հազ. տ պ.վ.	128,0	216,1	257,0	264,9	236,9
12	Ատոմային էներգիա (ներկայացված է գեներատորների արտադրած էներգիան), հազ. տ պ.վ.	732,1	841,0	736,1	885,4	1000,9
13	Ընդամենը վառելիքէներգետիկ պաշարներ, հազ. տ պ.վ. (հազ. տ ն.հ.)	2902,8 (2032,0)	2664,4 (1865,1)	2714,3 (1900,0)	3089,8 (2162,9)	3461,8 (2423,3)

Էլեկտրաէներգիայի արտադրության աճը 2005 թ. 2001-ի նկատմամբ կազմել է շուրջ 11%, ընդ որում բաշխիչ ցանցին տրվել է 2005 թ. 4778 մլն. կՎտ·ժ էլեկտրաէներգիա: Տեխնիկական կորուստները 0,38-220 կՎ լարման հայաստանյան ցանցերում 2001-2005 թթ. 12,5%-ից նվազել են մինչև 10% (աղ. 4, 5, 2004թ. հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին և 2005թ. կայաններից առաքված էլեկտրաէներգիայի հաշվառքը կատարվել է բարձր լարման ՕԳ-երով, մինչ այդ՝ գեներատորների ելուստներով):

Աղյուսակ 4

**Հայկական էներգահամակարգի էլեկտրաէներգիայի հաշվեկշիռը 2001-2005թթ. համար**

մլն. կՎտ· ժ

h/h		2001	2002	2003	2004	2005
1	Էլեկտրաէներգիայի արտադրանքը՝ ընդամենը	5745	5517	5501	6031	6316
	Այդ թվում՝ ՀԱԷԿ	1987	2282	1998	2403	2716
	Ջերմային կայաններ	2791	1579	1517	1613	1827
	Հիդրոկայաններ և հողմակայաններ	967	1662	1981	2015	1773
	այդ թվում՝ խոշոր ՀԷԿեր	892	1559	1869	1867	1618
	փոքր ՀԷԿ-եր և հողմակայան «Լոռի-1»	75	104	112	149	155
2	Սեփական կարիքներ՝ ընդամենը	393	335	313	341	374
	Այդ թվում՝ ՀԱԷԿ	172	204	179	202	207
	Ջերմային կայաններ	211	121	121	129	156
	խոշոր ՀԷԿեր	8,2	8,62	10,18	8,02	7,66
	փոքր ՀԷԿ-եր և հողմակայան «Լոռի-1»	1,43	1,71	2,24	2,54	2,62
3	Էլեկտրաէներգիայի առաքումը էլեկտրական կայաններից՝ ընդամենը	5352	5182	5188	5681	5911
	Այդ թվում՝ ՀԱԷԿ	1814	2078	1818	2201	2504
	Հրազդան ՋԷԿ	2336	1214	1211	1283	1316
	Հաշվեկշռման էլեկտրաէներգիա որից՝ արտահանում	-	-	-	-	60
	Երևան ՋԷԿ	244	237	190	199	338
	խոշոր ՀԷԿեր	884	1550	1862	1858	1600
	փոքր ՀԷԿ-եր և հողմակայան «Լոռի-1»	74	102	108	141	153
4	«ԲԷՑ» ՓԲԸ ընդունած էլեկտրական էներգիան՝ ընդամենը	5678	5484	5495	5906	6027
	Այդ թվում՝ էլեկտրական կայաններից	5352	5182	5188	5646	5689
	էլեկտրական էներգիայի ներհոսք	326	302	307	260	338
5	«ԲԷՑ» ՓԲԸ հանձնած էլեկտրական էներգիան՝ ընդամենը	5339	5226	5266	5774	5929
	Այդ թվում՝ «ՀԷՑ» ՓԲԸ՝ ընդամենը	-	-	-	1273	4778
	այդ թվում՝ էլեկտրական կայաններից	-	-	-	512	2267
	«ԲԷՑ» ՓԲԸ ենթակայաններից	-	-	-	761	2519
6	Էլեկտրական էներգիայի արտահոսք՝ ընդամենը	699	658	583	1004	1151

**ՀՀ 0,38-220 կՎ էլեկտրացանցում կորուստների ցուցանիշները 2001-2005թթ. (առանց էլեկտրակայանների տրանսֆորմատորների կորուստների)**

մլն. կՎտ.ժ

հհ	Ցուցանիշի անվանում	2001	2002	2003	2004	2005
1	ԲԷՑ-ին առաքված էլեկտրաէներգիա (ներառյալ ներհոսքը)	5678	5484	5495	5906	6027
2	Ներհոսք	326	302	307	260	338
3	Արտահոսք	699	658	583	1004	1151
4	Տեխնիկական կորուստը 0.38-220 կՎ ցանցում	708	669	663	638	605
	Այդ թվում՝ կորուստը գծերում	347	329	345	324	302
	կորուստը տրանսֆորմատորներում	344	323	303	301	290
	այլ (սեփ.կարիք, սինք. փոխ. և այլն)	17	18	15	13	12
5	Չափված կորուստ	-	-	-	1077	932

Ջերմային էլեկտրակայաններում վառելիքաէներգետիկ պաշարների տեսակարար ծախսի ցուցանիշները վկայում են գործող կայանային էներգատեղակայանքների բարոյական և ֆիզիկական մաշվածության մասին՝ 360-390 գր.պ. վառելիք է ծախսվել 1 կՎտ.ժ էլեկտրաէներգիայի արտադրության վրա: Ժամանակակից տեխնոլոգիաներով արտադրության համեմատությամբ այս ցուցանիշը շուրջ 1,5 անգամ ավել է (աղ. 6):

**ՀՀ ջերմային էլեկտրակայանների արտադրանքը և ՎԷՊ-ի տեսակարար ծախսը**

h/h	Արտադրություն	Չափման միավոր	Երևանի ՋԷԿ				Հրազդանի ՋԷԿ			
			2001	2002	2003	2004	2001	2002	2003	2004
1	Ջերմային էներգիա	հազ. Գկալ	342	216	193	230	83	94	106	97
2	Էլեկտրաէներգիա	մլն. կՎտ.ժ	282	267	215	225	250 9	131 2	130 2	138 8
3	ՎԷՊ-ի տեսակարար ծախսը ջերմ. էներգիայի արտադրության վրա	<u>կգ.պ.վ.</u> Գկալ	181	175	178	178	178	150	150	150
4	ՎԷՊ-ի տեսակարար ծախսը էլ.էներգիայի արտադրության վրա	<u>գր.պ.վ.</u> կՎտ.ժ	373	391	386	360	372	371	374	383

Հայաստանի էլեկտրաէներգիայի արտադրության և էլեկտրակայանների դրվածքային հզորության կառուցվածքի համաձայն՝ 2004թ. ՀԷԿ-երի, ՋԷԿ-երի և ԱԷԿ-ի կողմից արտադրված էլեկտրաէներգիան ընդհանուրի մեջ կազմել է համապատասխանաբար 33,4, 26,7 և 39,9 %, 2005 թ. դրանք կազմել են 28, 29 և 43 %: Տարեկան էլեկտրաէներգիայի ներհոսքը կազմում է 260-ից մինչև 350 մլն. կՎտ.ժ, արտահոսքը՝ 600-ից մինչև 1100 մլն. կՎտ.ժ:

Հանրապետության էլեկտրաէներգետիկայում և տնտեսության այլ ճյուղերում օգտագործվող բնական գազի ողջ ծավալները ներմուծվում են Ռուսաստանից (Վրաստանի տարածքով): 2001-2005թթ. ընթացքում ներմուծման ծավալներն աճել են 19,6%-ով և 2005 թ. կազմել են 1685 մլն. մ<sup>3</sup> (աղ. 7):

**Հայաստանի Հանրապետության բնական գազի հաշվեկշիռը 2002-2005 թվականներին, հազ. մմ<sup>3</sup>**

(2001թ. տվյալները չեն տրվում՝ ցածր արժանահավատության պատճառով)

h/h	Անվանումը	Ըստ տարիների			
		2002	2003	2004	2005
1	<b>Գազի մնացորդը ամսվա սկզբում</b>	21758,0	26008,0	76425,1	60911,0
	- Համակարգում	5977,0	6224,0	5223,1	3680,0
	- Գազի ստորգետնյա պահեստավորման կայանում	15781,0	19784,0	71202,0	57231,0
2	<b>Ստացվել է ընդամենը՝</b>	1140428,0	1272893,9	1403440,1	1744124,0
	- «Կարմիր կամուրջ» չափման հանգույցից	1070292,0	1200945,0	1332570,0	1685031,0
	- Համակարգից	6746,0	7707,9	7162,1	4880,0
	- Գազի ստորգետնյա պահեստավորման կայանից, ընդամենը	63390,0	64241,0	63708,0	54213,0
	Մղված է գազի ստորգետնյա պահեստավորման կայան	69511,0	116684,0	52257,0	83944,0
	Թողնված է գազատրանսպորտային համակարգում	6993,0	6707,0	5619,0	9811,0
3	<b>«Տրանսգազ» ՍՊԸ շահագործման համակարգում՝</b>				
	- Տեխնոլոգիական կորուստներ	45819,3	51733,2	61699,0	69140,7
	- Շինարարական կարիքներ	25,4	67,0	370,1	134,6
	- Վթարային արտահոսք	679,2	452,1	1046,1	945,5
	- Գազի ստորգետնյա պահեստավորման կայանի կորուստներ	215,0	980,0	2473,0	1996,0
	- Գազի ստորգետնյա պահեստավորման կայանի վթարային արտահոսք	1854,0			
4	<b>Բաշխվել է ընդամենը՝</b>	1017425,5	1097317,6	1282819,0	1580282,8
	- Գազաբաշխման համակարգին	959675,9	1031926,3	1211352,8	1499557,3
	- Ավտոգազայցման ճնշակային կայանին	41279,4	45203,7	50754,1	54734,7
	«Տրանսգազ» ՍՊԸ արտադրատեխն. կարիքներ	7047,5	8364,9	5840,8	8183,1
	- Գազի ստորգետնյա պահեստավորման կայանի արտադրատեխնիկական կարիքներ	49,0	45,0	47,0	46,0
	- «Արցախգազ»-ին	9397,4	11755,7	14501,2	17627,1
5	<b>Գազի մնացորդը տարվա վերջում՝</b>	26008,0	76425,1	60911,0	93531,0
	- Համակարգում	6224,0	5223,1	3680,0	8611,0
	- Գազի ստորգետնյա պահեստավորման կայանում	19784,0	71202,0	57231,0	84920,0
6	<b>Իրացվել է գազաբաշխման համակարգի միջոցով</b>	901389,1	977187,8	1155893,5	1443539,1
	Գազաբաշխման համակարգում				
	- Տեխնոլոգիական կորուստներ	53888,5	53028,7	53616,9	54051,7
	- Արտադրատեխնոլոգիական կարիքներ	3976,0	1253,6	1534,8	1334,3
	- Վթարային արտահոսք	422,2	456,2	307,7	632,2
7	<b>Ընդհանուր համակարգում</b>				
	- Տեխնոլոգիական կորուստներ	99707,9	105741,9	117788,8	125188,4
	- Արտադրատեխնոլոգիական կարիքներ	11023,5	9618,5	7375,6	9517,4
	- Վթարային արտահոսք	1117,4	908,3	1353,8	1577,7

Բնական գազի վերջնական սպառումը 2001 թ. մինչև 2005թ. աճել է 11%-ով և կազմել 1443,5 մլն. մ<sup>3</sup> 2005թ.: Հիմնական սպառողները էներգետիկական, արդյունաբերությունը և բնակչությունն են, սակայն վերջինիս աճի տեմպերը շատ բարձր են. այն շուրջ 300% է կազմել, արդյունաբերության մեջ սպառումը կրկնապատկվել է (աղ. 8,9):

Աղյուսակ 8

**Բնական գազի սպառումը և նրա կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի 2002-2005 թթ., հազ. մ<sup>3</sup>**

**(2001թ. տվյալները չեն տրվում՝ ցածր արժանահավատության պատճառով)**

h/h	Անվանումը	Ըստ տարիների			
		2002	2003	2004	2005
	<b>Գագաբաշխման համակարգ</b>	<b>901389</b>	<b>977192</b>	<b>1155894</b>	<b>1443540</b>
1	<b>Էներգետիկա</b>	<b>518622</b>	<b>495050</b>	<b>537100</b>	<b>619033</b>
	Երևանի ՋԷԿ	105098	84757	86466	153334
	Հրազդանի ՋԷԿ	411135	407277	448764	464672
	ՀԱԷԿ	2389	3016	1869	1028
2	<b>Ավտոգազայլցման ճնշակային կայան</b>	<b>23392</b>	<b>42423</b>	<b>59764</b>	<b>93771</b>
3	<b>Արդյունաբերություն</b>	<b>193331</b>	<b>206275</b>	<b>275765</b>	<b>346748</b>
	այդ թվում՝ Նախիրիտ գործարան	28897	17124	38091	72794
	«Միկացեմենտ» ընկերություն	30387	19639	38255	53151
	«Արարատցեմենտ» ընկերություն	31890	54854	77770	89807
	Մետալուրգիա	25585	27332	32250	35749
	Ապակու արտադրություն	10759	12707	16694	17019
	Հացի արտադրություն	5810	6754	8240	9917
	Պահածոյացման արտադրություն	4006	7544	2982	4114
	Խմիչքների արտադրություն	17600	19439	22072	22883
	Այլ սպառողներ	38398	40883	39412	41314
4	<b>Բյուջետային հիմնարկներ</b>	<b>15633</b>	<b>19423</b>	<b>22782</b>	<b>28922</b>
	Հիվանդանոցներ	3289	3773	4884	6539
	Այլ սպառողներ	12344	15649	17898	22383
5	<b>Այլ սպառողներ</b>	<b>20250</b>	<b>28697</b>	<b>33659</b>	<b>44054</b>
6	<b>Ջեռուցում</b>	<b>28826</b>	<b>32244</b>	<b>6371</b>	<b>497</b>
7	<b>Բնակչություն</b>	<b>101335</b>	<b>153080</b>	<b>220452</b>	<b>310515</b>

Աղյուսակ 9

ՀՀ բնական գազի վերջնական սպառման կառուցվածքը, մլն. մմ<sup>3</sup>

h/h	Անվանում	Տարիներ			
		2002	2003	2004	2005
1	<i>Արդյունաբերություն, այդ թվում՝ պողպատ և չուգուն ոչ մետաղական հանքանյութ այլ</i>	<i>193,3 25,6 73,0 94,7</i>	<i>206,3 27,3 87,2 91,7</i>	<i>275,8 32,2 132,7 110,8</i>	<i>346,7 35,7 160,0 151,0</i>
2	<i>Տրանսպորտ, այդ թվում՝ օդային ավտոտրանսպորտ(ԱԳԼՃԿ)</i>	<i>24,8 1,4 23,4</i>	<i>44,0 1,6 42,4</i>	<i>61,6 1,9 59,8</i>	<i>96,0 2,3 93,8</i>
3	<i>Այլ սեկտորներ, այդ թվում՝ շինարարություն գյուղատնտեսություն առևտուր և սպասարկում բնակարանային այլ</i>	<i>164,6 2,1 0,4 13,0 101,3 47,7</i>	<i>231,9 2,3 0,4 21,6 153,1 54,5</i>	<i>281,4 2,8 0,4 27,9 220,5 29,8</i>	<i>381,7 3,4 0,6 37,8 310,5 29,3</i>
4	<i>Էլեկտրաէներգետիկա</i>	<i>518,6</i>	<i>495,0</i>	<i>537,1</i>	<i>619,0</i>
5	<i>Ընդհանուր սպառում</i>	<i>901,4</i>	<i>977,2</i>	<i>1155,9</i>	<i>1443,5</i>

Էլեկտրաէներգիայի հիմնական սպառումը սպասարկման, բնակչության և արդյունաբերական ոլորտներում է կատարվում (աղ. 10):

Աղյուսակ 10

Էլեկտրաէներգիայի սպառման կառուցվածքը, մլն. կՎտ·ժ

h/h	Ոլորտ	2001	2002	2003	2004	2005
1	Արդյունաբերություն	850	720	800	920	1020



2	Բնակչություն և ծառայություններ	1710	1790	1900	1970	1890
3	Տրանսպորտ և կապ	120	120	120	120	110
4	Գյուղատնտեսություն	290	300	750	320	290
5	Այլ	480	470	90	670	1060
6	Ընդհանուր	3450	3400	3660	4000	4370

2001-2005թթ. ընթացքում ՎԷՊ-ի սպառումն աճել է. արդյունաբերությունում՝ շուրջ 2 անգամ, բնակչության և սպասարկման ոլորտում՝ 2,7 անգամ, տրանսպորտում՝ 1,5 անգամ, գյուղատնտեսությունում՝ 1,14 անգամ, իսկ էներգետիկայում նվազել է 1,5 անգամ (հիմնականում


էլեկտրացանցերում կորուստների նվազեցման հաշվին) (աղ. 11):

Աղյուսակ 11


**Վառելիքաէներգետիկ պաշարների սպառման կառուցվածքը, հազ. տ պ.վ.**

h/h	Ոլորտ	2001	2002	2003	2004	2005
1	Արդյունաբերություն	227,2	262,7	355,6	368,8	457,9
2	Բնակչություն և ծառայություններ	159,9	207,4	249,7	308,8	434,4
3	Էներգետիկա	1180,5	702,6	705,5	676,0	776,1
4	Տրանսպորտ	432,8	477,3	500,1	597,3	648,0
5	Գյուղատնտեսություն	151,0	151,5	154,0	173,0	171,7
6	Ընդհանուր, հազ. տ պ.վ.	2151,4	1801,5	1964,9	2123,9	2488,1
7	Ընդհանուր, հազ. տ ն.հ.	1510	1260	1380	1490	1740


Հայաստանում մեկ շնչին ընկնող վառելիքաէներգետիկ պաշարների վերջնական սպառումը 2001-ից մինչև 2005թ. աճել է 501,2 կգ ն.հ. ծավալից մինչև 555,8 կգ ն.հ (11%-ի աճ): Նույն շրջանում էլեկտրաէներգիայի վերջնական սպառումը 1205,1 կՎտ·ժ/մարդ արժեքից աճել է մինչև 1359,1 կՎտ·ժ/մարդ արժեքը (12,8%): Բնական գազի սպառումը 404,5 մ<sup>3</sup>/մարդ արժեքից հասել է մինչև 448,5 մ<sup>3</sup>/մարդ արժեքի (10,9%-ի աճ): Հայաստանում մեկ բնակչի էլեկտրագինվածությունը կամ էլեկտրաէներգիայի վերջնական սպառումը՝ մեկ բնակչի հաշվով 2005 թ. կազմել է 1359,1 կՎտ·ժ, որը զգալիորեն զիջում է, օրինակ, Չեխիայի (5400 կՎտ·ժ) և Հունգարիայի (3440 կՎտ·ժ) ցուցանիշներին: **Այս ցուցանիշի արժեքը անհրաժեշտ է մեծացնել՝** հաշվի առնելով նաև այն հայտնի իրողությունը, որ տնտեսության ճյուղերում էլեկտրագինվածության աճը 1 %-ով պայմանավորում է աշխատանքի արտադրողականության աճ 1 %-ով: Հայաստանը վառելիքաէներգետիկ պաշարների տեսակարար սպառման ցուցանիշով հետ է մնում տարածաշրջանի շատ երկրներից, իսկ եվրոպական զարգացած երկրների համեմատությամբ այդ տարբերությունը կկազմի 5-ից 8 անգամ. Ֆրանսիայում այդ ցուցանիշը հավասար է 4410 կգ ն.հ/մարդ: 2002-2005թ.թ. ընթացքում Հայաստանում նկատվում է ՎԷՊ-ի (նաև էլեկտրաէներգիայի) փոխակերպման միջին արդյունավետության աճ 10-12 %-ի չափով (նկ. 8,9,10 ):



Նկար 8. Մեկ շնչին ընկնող առաջնային ՎԷՊ-ի և ՎԷՊ-ի վերջնական սպառումը Հայաստանում



Նկար 9. Մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությունը և վերջնական սպառումը Հայաստանում



Նկար 10. Մեկ շնչին ընկնող բնական գազի ներմուծումը և վերջնական սպառումը Հայաստանում

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում բնակչի էներգազինվածությունը պետք է աճի տնտեսության զարգացմանը համընթաց, այսինքն՝ սպասվում է ՎԷՊ-ի սպառման ծավալների աճ:

Այսպիսով, ակնհայտ է, որ երկրի տնտեսության զարգացման համար պետք է բարձրացնել արդյունաբերության և ծառայությունների ընդհանուր ու էներգետիկ արդյունավետությունը և ավելացնել մեկ բնակչին ընկնող վառելիքաէներգետիկ պաշարների սպառման ծավալները:

Բնակարանային սեկտորում էներգապաշարների սպառումը 2005-2006թթ. ըստ դրանց տեսակների, բնակավայրերի, բնակարանների տեսակների՝ ունի հետևյալ պատկերը.

1) Էլեկտրաէներգիայի սպառումը 2006թ. հունվարին բնակելի սեկտորի բաժանորդների շրջանում կազմել է 78-ից մինչև 383 կՎտ·ժ մեկ բաժանորդի հաշվարկով, միջին հանրապետականը ձմեռային սեզոնում տատանվում է 119-223 կՎտ·ժ/բաժանորդ տիրույթում:

2) Բնական գազի սպառումը 2006թ. հունվարին կազմել է՝ միջին հանրապետականը 217,9 մ<sup>3</sup>/բաժ. և տատանվել է ըստ բնակավայրերի 134-313 մ<sup>3</sup>/բաժ. տիրույթում:

3) Բնակչության՝ էլեկտրաէներգիայի ամսական սպառումը 2006 թ. հունվարին կազմել է 181,5 մլն. կՎտ·ժ և ձմռանը փոխվել է 109,1-188 մլն. կՎտ·ժ/ամիս տիրույթում:

4) Բնական գազի՝ բնակչության ամսական սպառումը 2006 թ. հունվարին կազմել է 72 մլն.մ<sup>3</sup> և ձմռանը փոխվել է 33,8 -72 մլն. մ<sup>3</sup>/ամիս տիրույթում:

5) Բնակարանների ջեռուցման նպատակով 2005 թ. օգտագործվել է 16 հազ. տ պ.վ. վառելիքային: Այս տվյալի հավաստիությունը գնահատվում է շատ ցածր:

6) Լեռնային անտառազուրկ բնակավայրերում ջեռուցման համար օգտագործվում է աթար: Այդ մասին որևէ ստույգ թվային տեղեկություն չկա: Այս տեսակի բնակելի տների թվաքանակը փորձագիտական գնահատմամբ կազմում է հանրապետության գյուղական համայնքների բնակելի տների ընդհանուր թվի՝ 228507-ի շուրջ 60%-ը, այսինքն՝ 131 հազար տուն:

ՀՀ ջերմամատակարարման համար էներգապաշարների սպառման պատկերը հետևյալն է.

7) Բնակելի սեկտորում ջերմային էներգիայի տարեկան պահանջարկը կազմում է 11149 հազ. Գկալ, որը բավարարվում է 25,6 %-ով (2859 հազ. Գկալ):

8) Քաղաքացիական նշանակության շենքերի ջերմային էներգիայի տարեկան պահանջարկը կազմում է 1369,1 հազ.Գկալ, որոնց ջերմամատակարարման ապահովվածությունը գտնվում է բարձր մակարդակի վրա:

9) Հանրապետության գերատեսչական (Երևանում), մարզկենտրոնների ու քաղաքների վարչական շենքերը, կրթական, առողջապահական, մշակութային օբյեկտների մեծ մասը ապահովված են ջեռուցման համակարգերով (սեփական կաթսայատներ կամ էլեկտրական տաքացուցիչներ):

10) Արտադրական սեկտորում ջերմամատակարարվում են վարչական շենքերը մասնակի, հազվադեպ դեպքում՝ սեփական կաթսայատներից («Նաիրիտ գործարան»-ը՝ Երևանի ՋԷԿ-ից), որպես կանոն՝ էլեկտրական տաքացուցիչների միջոցով:

Հանրապետությունում էլեկտրաէներգիայի (ԱԷԿ-ի և ՀԷԿ-երի) և բնական գազի վերջնական սպառման աճը 2001-2005 թթ. համապատասխանաբար կազմել է 26,6 % (3450-ից մինչև 4370 մլն. կՎտ·ժ) և 7 % (1494,6-ից մինչև 1600 հազ. տ պ.վ.): Այդ ժամանակահատվածում ՎԷՊ-ի սպառումն աճել է 2151,4-ից մինչև 2488,1 հազ. տ պ.վ., այսինքն՝ 15,6 %-ով, իսկ նավթամթերքի վերջնական սպառման աճը կազմել է 4,2 % (497,2-ից մինչև 518,3 հազ. տ պ.վ., իսկ միջին տարեկան սպառումը կազմել է 521,9 տ պ.վ.):

Վերջին 5 տարիների ընթացքում Հայաստանում վերջնական սպառման միջին տարեկան աճը կազմում է՝

ա) ՎԷՊ-ի մասով՝	3,12%,
բ) էլեկտրաէներգիայի մասով՝	5,32%,
գ) բնական գազի մասով՝	1,4%,
դ) նավթամթերքների մասով՝	0,84%:

Հաշվի առնելով սեփական հանածո ածխաջրածնային պաշարների բացակայությունը երկրում (կամ դրանց չբացահայտված լինելու իրողությունը)՝ պետք է փաստել, որ տնտեսության էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգետիկայի զարգացման հրամայականը՝ որպես երկրի սեփական՝ ազգային տեսակի էներգիայի աղբյուր, Հայաստանում այլընտրանք չունի:

## V. ՀՀ ԷՆԵՐԳԱՆՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԵՐՈՒԺ

### 1. ԷՆԵՐԳԱՆՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ԾՅՈՒՂԵՐ

1) Հայաստանի վառելիքաէներգետիկ պաշարների ծախսի կառուցվածքի 2005 թ. տվյալներով, որի համար հիմք են ծառայել սույն Ծրագրի շրջանակներում ՀՀ-ի 62 խոշորագույն էներգասպառողների մոտ կատարած էներգետիկական անձնագրային ցուցանիշների հավաքը և վերլուծությունը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի, «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի և ազգային վիճակագրության տվյալները, հանրապետության տնտեսության էներգախնայողության գերակա ուղղություններն են՝

ա) էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի արտադրությունը, բաշխումը և սպառումը,

բ) խմելու և ոռոգման ջրի մատակարարումը,

գ) էլեկտրական լուսավորումը,

դ) հանքարդյունաբերությունը,

ե) ոչ մետաղական հանքարտադրությունը,

զ) քիմիական արտադրությունը,

է) կապը,

ը) սննդի արտադրությունը:

**2) Ըստ տնտեսության գործունեության ոլորտների՝ խոշորագույն սպառողների էներգածախսը տարեկան կտրվածքով**

h/h	Անվանում	էլեկտրաէներգիա, մլն. կՎտ·ժ	Բնական գազ, մլն.մ <sup>3</sup>
1	Բնակչություն (կենցաղային սպառում)	1440	310
2	Մշակող արդյունաբերություն, այդ թվում՝ - քիմիական արդյունաբերություն, - սննդի արդյունաբերություն - այլ	646,7 227 236 183,7	324,6 73,4 39,4 211,8
3	էլեկտրաէներգիայի, բնական գազի, ջրի արդյունահանում և բաշխում	428,6	620,1
4	Հանքագործական արդյունաբերություն	371	26,7
5	Տրանսպորտ և կապ (առանց ավտոմոբիլային տրանսպորտի)	181,8	2,8
6	Ավտոմոբիլային տրանսպորտ	-	93,7 (հեղուկ գազ- 2,05 հազ.տ, դիզ. վառելիք՝- 60,7 հազ.տ բենզին - 187,7 հազ.տ)
7	Պետական կառավարում	168	6,3

**3) Ամենաբարձր էներգատարություն ունեցող ընկերությունները**

h/h	Անվանումը
1	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ
2	Կապանի պղնձամոլիբդենային կոմբինատ
3	Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ
4	Արարատի ոսկու արդյունահանման ընկերություն
5	«Մասիս տոբակո» ընկերություն
6	«Նաիրիտ գործարան» ընկերություն
7	«Միկա ցեմենտ» ընկերություն
8	«Մաքուր երկաթ» ընկերություն
9	Հայկական երկաթուղի
10	«Արմենթել» ընկերություն
11	«Հայջրմուղկոյուղի» ընկերություն
12	«Գրանտ տոբակո» ընկերություն
13	«Արարատ ցեմենտ» ընկերություն

**4) էներգատար տեխնոլոգիաները**

h/h	Անվանումը
1	Հանքաքարի ջարդում, մանրացում, ֆլոտացիա
2	Մետաղի հալում
3	Կլինկերի ստացում
4	էլեկտրատրանսպորտ

**5) Զանգվածային կիրառման էներգատեղակայանքները և տեխնոլոգիաները**

h/h	Անվանումը
1	Փոփոխական բեռնվածքով էլեկտրական շարժաբերով տեխնոլոգիական ազրեգատներ

2	Ջերմամատակարարման համակարգեր
3	Էլեկտրական լուսավորման տեղակայանքներ
4	Շենքերի ջերմամեկուսացում
5	Տրանսպորտային միջոցներ

## 2. ԷՆԵՐԳԱՆՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՆԵՐՈՒՄ

Քաղաքակրթության, գիտության և տեխնիկայի բնականոն զարգացումը պայմանավորում է տեխնոլոգիաների ու նյութերի շարունակական կատարելագործում և նոր, առաջավոր տեխնոլոգիաների ու նյութերի ստեղծում, այդ թվում նաև վառելիքաէներգետիկ համալիրներում: Այսպիսով, ժամանակի ընթացքում ցանկացած էներգասպառող տեղակայանքի (համակարգի) համար ձևավորվում են նոր պայմաններ նրա էներգետիկ արդյունավետությունը բարձրացնելու համար: Այն կարող է արտահայտվել, օրինակ, նոր, բարձր հատկություններով մեկուսիչ նյութերի, էներգաարդյունավետ էներգաձևափոխիչների, կառավարման ձևերն էներգաարդյունավետ համակարգերի, բարձր ճշգրտության չափիչ-ստուգիչ համալիրների և այլնի ստեղծման և կիրառման միջոցով:

Հավելվածներ 1 և 2-ում տրված են Հայաստանի վառելիքաէներգետիկ պաշարների ծախսի կառուցվածքը և դրանց տեսակարար ծախսերն ըստ տնտեսության ոլորտների:

Դրանց հիման վրա կատարվել է Հայաստանի տնտեսության էներգախնայողության տեխնիկապես մատչելի ներուժի հաշվարկ (հավելված 3):

